ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ե. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 1967—1970 ԹԹ.

Եգիպտոսի հեղափոխական զարգացման ժամանակաշրջանի մեջ ուրույն տեղ ունի նրա վերջին փուլը, որն ընդգրկում է 1967—1970 թթ. ժամանակահատվածը։ Այս փուլի նշանակությունը Եգիպտոսի նորագույն պատմության մեջ կարևոր է ոչ միայն նրանով, որ ընդգրկում է այդ պատմության ամենադրամատիկ ժամանակահատվածը, այլև նրանով, թե այս փուլի ընթացքում Եգիպտոսի ներքաղաքական իրադարձություններն ու դրանցից առաջացած երևույթները ինչպիսի՞ դեր ունեցան երկրի հետագա զարգացման վրա։ Այս փուլում Եգիպտոսում տեղի ունեցած իրադարձություններին, վերափոխումներին և նկատվող նոր երևույթներին սովետական պատմագրության մեջ անդրադարձել են Լ. Ի Մեդվեդկոն, Ա. Գ. Բակլանովը, Օ. Մ. Գորբատովը և Լ. Ցու. Զերկասսկին, Գ. Ի. Սմիռնովան, Վ. Ա. Լուցկևիչը, Ս. Ն. Վոլկովը և ուրիշներ։ Հատկապես պետք է նշել այս փուլի իրողությունների առավել ամբողջական անդրադարձը Ի. Պ. Բելյաևի և Ե. Մ. Պրիմակովի «Եգիպտոսը պրեզիդենտ Նասերի օրոք» աշխատության մեջ։ Անտարակույս, այս աշխատության հեղինակները տվել են այդ փուլի զարգացումների հիմնական ուղղություններն ու գնահատականները։ Սույն հոդվածի գլխավոր նպատակն է բացահայտել այս փուլում սրված ներքաղաքական պայքարի դրդապատճառները, տեղի ունեցած փոփոխությունների սոցիալ-քաղաքական արժեքը և դրանց կապը երկրում տեղի ունեցած հետագա իրադարձությունների հետ։

60-ական թվականների վերջերին արաբական առաջադիմական շարժման մեջ ի հայտ եկան ճգնաժամային երևույթներ։ Դրանց ետևում թաքնված էին երեք հիմնական պատճառներ։ Առաջինը, արաբական առաջադիմական վարչակարգերի ներքաղաքական անկայունությունն էր։

Որոշ երկրներում դա արտահայտվում էր հաճախակի հեղաշրջումներով, իսկ որոշ երկրներում էլ տարբեր հասարակական խավերի տարանջատման ընթացքի արագացումով։ Այդ անկայունությունը հետևանքն էր այն հակասական, որոշ դեպքերում արատավոր գաղափարախոսական սկզբունքների, որոնց հետևում էին արաբական առաջադիմական շարժման առաջնորդները՝ հասարակական-տնտեսական զարգացման հարցերում։ Երկրորդը, միասնականության բացակայությունն էր այդ շարժման մեջ. միաժամանակ մի քանի կենտրոններ հավակնում էին հեգեմոնի դերի, որը կորոշեր արաբական երկրների զարգացման հետագա ուղին։ Այդ կենտրոնների միջև ընթացող պայքարը թուլացնում էր իմպերիալիզմի, սիոնիզմի և տեղական հետադիմության դեմ մղվող պայքարի ընդհանուր ճակատը։ Երրորդը, 1967 թ. պատերազմում առաջադիմական երկու երկրների՝ Եգիպտոսի և Սիրիայի կրած ծանր պարտությունն էր։ Օգտագործելով Իսրայելի մշտական ռազմական սպառնալիքները՝ քաղաքական ճնշումների նպատակով, իմպերիալիստական երկրները արաբական հետադիմական վարչակարգերին, և առաջին հերթին Սաուդյան Արաբիային, հատկացրեցին առաջադիմական երկրների ներսում աջ ուժերի հակահեղափոխական գործունեության դրդողի և հովանավորի դերը։ Արաբական հետադիմության գործունեությունն այս ասպարեզում հանգում էր ֆինանսատնտեսական օգնությունների քողի տակ առաջադիմական վարչակարգերից հետադեմ խավերի համար զիջումներ կորզելու խնդրին։ Միջազգային իմպերիալիզմի և արաբական հետադիմության այս գործունեության շնորհիվ էր, որ հետագայում, այլևայլ հանգամանքների զուգորդությամբ, ժամանակավոր ետընթաց շարժում առաջացավ այնպիսի երկրներում, ինչպիսիք էին Սուդանը, Սոմալին և Եգիպտոսը։ Ինչ վերաբերում է Սիրիային, ապա թերևս պատմականորեն ստեղծված տարբերվող պայմանները և սիրիական Բաաս կուսակցության կայուն ներքին և արտաքին քաղաքականությունը նրան զերծ պահեցին սոցիալ-քաղաքական կողմնորոշումը կասկածի տակ դնող նախադրյալների առաջացումից։

Սխալ կլիներ նասերական վարչակարգի թուլությունը փնտրել միայն նրա հակառակորդների ուժի մեջ։ Պետք է ընդգծել, որ այդ վարչակարգի հեղափոխական միջոցառումները համարյա մշտապես զուգորդվում էին եգիպտական մանր և միջին բուրժուազիային կատարվող զիջումներով, դրանք սողանցքներ էին թողնում իրենց գործադրման իմաստային նենգափոխումների, քաղաքի և գյուղի ունևոր դասի տնտեսական և քաղաքական դիրքերի հզորացման համար։ Կարճառոտ բնութագրելու

համար Եգիպտոսի ներքաղաքական իրավիճակը անմիջապես նախքան պատերազմը և հաստատելու համար վերոհիշյալ մտքերը բերենք պրեզիդենտ Նասերի վկայությունները նրա 1966 թ. ելույթներից։ «... մեզ մոտ մասնավոր հատվածում ազգային բուրժուազիան աճել է ավելի մեծ չափով, քան մենք ենթադրում էինք 1960 թ....։ Ներկայումս մեծածախ առևտրի 60 տոկոսը գտնվում է մասնավորների ձեռքում...նրանք վերահսկում են 120 մլն ֆունտի (եգիպտական ֆունտի—Ե. Ա.) շրջանառություն (շրջանառու միջոցների —Ե. Ա.)»[1]։ «Արդեն երևում են նախկին ավատատիրական վարչակարգի ամրապնդման նշանները...։ Այսօր, հեղափոխությունից 14 տարի անց, մենք ստեղծեցինք Ավատատիրության վերացման հանձնաժողով։ Պարզվեց, որ որոշ կալվածատերեր «թաքցրել» էին հողերը. հանձնաժողովը բացահայտեց նաև հողային բարեփոխումների արդյունքների վերացման մի շարք փորձեր։ Գտնվել են խաբեությամբ 800-ական ֆեդան[2] պահպանած կալվածատերեր...։ Գյուղում դեռ պահպանվել են ինչպես հին արտադրական հարաբերությունները, այնպես էլ կալվածատերերի ազդեցությունը։ Նույնիսկ այժմ հազվադեպ չէ, երբ մի կալվածատիրական ընտանիք գյուղում իր ձեռքում է պահում գյուղապետին, պահնորդներին և ողջ տեղական ղեկավարությանը»[3]։ Այս բոլորը ցույց են տալիս, թե ինչու Եգիպտոսում, մի երկրում, որը հռչակվել էր առավել խոր սոցիալ-տնտեսական վերափոխություններով, հակահեղափոխությունը արտաքին հետադիմության օգնությամբ պատերազմից հետո կարողացավ պայքար մղել իր տնտեսական դիրքերի ուժեղացման, իսկ հետագայում՝ նաև իշխանության համար։

Չնայած հանրահայտ առաջադիմական վերափոխություններին, եգիպտական հասարակության ընդհանուր հետամնացությունը, հեղափոխության ղեկավարների գաղափարախոսական սկզբունքների հակասականությունը և պրակտիկ գործունեության անհետևողականությունը հեղափոխական ժամանակաշրջանում պայմանավորեցին հին բացասական գործոնների զարգացումը և նորերի առաջացումը։ Նշենք դրանցից մի քանիսը.

1. Եգիպտական հեղափոխությունը չկարողացավ հենվել ժողովրդական լայն զանգվածների վրա։ Մինչև 1967 թ. եգիպտական ղեկավարության մեջ այն համոզմունքն էր տիրում, թե բանակն է հեղափոխության միակ հենարանը և պետք է մնա որպես այդպիսին[4]։

2. Եգիպտական հեղափոխությունը չստեղծեց քաղաքական ավանգարդային կազմակերպություն։ Նրա ստեղծած կազմակերպությունները

թույլ կապեր ունեին ժողովրդական զանգվածների հետ, իսկ ղեկավարության մեջ արագ թափանցում էին օպորտունիստական և հակահեղափոխական տարրեր։

3. Եգիպտական հեղափոխությունն ըստ էության չջարդեց պետական հին մեքենան։ Հին բյուրոկրատական ապարատը արագորեն հարմարվեց նոր ժամանակներին և համալրվեց նոր տարրերով՝ պետական մեքենայի խոշորացմանը զուգընթաց։

4. Եգիպտական հեղափոխությունը չիրագործեց արմատական վերափոխություններ երկրի հասարակական և արտադրական հարաբերությունների մեջ։ Նրա ղեկավարության, այսպես կոչված «դասակարգային հաշտեցման», «իշխանության վերադասակարգային բնույթի», «ոչ շահագործողական կապիտալի» վերաբերյալ տեսական դրույթները պրակտիկայում ցույց տվեցին իրենց արատավոր էությունը։

Այս և բազմաթիվ այլ գործոններ գումարվելով այն դժվարություններին, որոնք առաջ եկան 1967 թ. պատերազմից հետո, Եգիպտոսում ստեղծեցին ծանր ու բարդ ներքաղաքական իրադրություն։

Դույզն ինչ շարժեքազրկելով հեղափոխական ժամանակաշրջանի վերջին փուլում Նասերի կառավարության ընդունած մի քանի որոշումների հեղափոխական նշանակությունը, ինչպես նաև ռազմական ծանր պարտության հետևանքները, այնուամենայնիվ յուրաքանչյուր ուսումնասիրող, ինչպես և ուրիշ դեպքերում, այս դեպքում էլ պետք է ելնի կոնկրետ արդյունքներից։ Վերոհիշյալ փուլը, անկասկած, բնութագրվում է մանրբուրժուական տեսության ու պրակտիկայի ակնհայտ ու տրամաբանական սնանկացումով։ Միաժամանակ այս փուլն այն հիմնական ժամանակահատվածն է, որի ընթացքում Եգիպտոսի ներքին հետադիմությունը բացահայտ կամ թաքնված ձևով կուտակում էր իր ուժերը՝ աշխատելով դեպի իրեն ձգել ղեկավարության անկայուն տարրերին, խարխլել իր բացահայտ հակառակորդների դիրքերը կամ ինչ-որ ձևով չեզոքացնել նրանց։ Եգիպտական հետադիմության գործունեության այս նպատակաուղղվածությունը առավելապես բացահայտվում է երկրի սոցիալ-տնտեսական շինարարության այն գլխավոր ոլորտներում, որտեղ հատկապես ակնառու դարձան Նասերի կառավարության վրիպումները։

1967 թ. հունիսյան պատերազմից հետո Եգիպտոսում ստեղծված ներքաղաքական իրավիճակը ուսումնասիրելիս առաջնակարգ հարց է դառնում նասերական վարչակարգի դրության գնահատումը։ Եթե արտաքին քաղաքական ասպարեզում այդ վարչակարգի կողմնորոշումը միանգամայն դրական բնույթի էր, և դրա մեջ մեծ դերը պատկանում էր անձամբ

Նասերին, ապա ներքաղաքական ասպարեզում տարաբնույթ ուժերի արհեստական համախմբումը ակնհայտ էր դարձնում վարչակարգի ներքին քաղաքականության վայրիվերո բնույթը։ Սա այսպես էր, այլապես ինչո՞վ բացատրել՝ այն հակասությունները, որ տեղ էին գտնում և՛ «Մարտի 30-ի ծրագրում», և՛ 1968 թ. հունիսյան բարեփոխումներում, և՛ 1969 թ. հուլիսյան հողային բարեփոխման օրենքներում և կառավարական այլ որոշումներում ու հայտարարություններում։ Տարբեր քաղաքական ուժերի՝ աջերի, ձախերի և «ճահճի» համագոյակցումը Եգիպտոսի կառավարման և քաղաքական-գաղափարախոսական ապարատում հենվում էր միայն Նասերի անվիճարկելի հեղինակության և ազդեցության վրա, որը կարողանում էր սանձահարել բոլոր այլ ուժերին[5]։ Այսպիսով կարելի է ասել, որ նասերական վարչակարգը, ղեկավարվելով մանրբուրժուական ելակետներով, ռազմական պարտության արագացմամբ թևակոխել էր զարգացման մի ժամանակահատված, երբ այլևս անհնար էր տարաբնույթ ուժերի տարանջատման ընթացքի դեմն առնելը և վարչակարգի այդ ընթացքն արդեն երկարատև լինել չէր կարող։ Այստեղ առանձնահատկությունն այն է, որ վերոհիշյալի հետևանքով ընդդիմադիր խմբավորումները ստեղծվում էին ո՛չ թե վարչակազմից դուրս, այլ վարչակազմի հենց ներսում։

Փաստերը վկայում են, որ եգիպտական ղեկավարության մեջ երկրի արտաքին և ներքին քաղաքական կողմնորոշման հարցերում հակասությունները առաջացել էին դեռ 60-ական թվականների սկզբում[6]։ Արաբական սոցիալիստական միության (ԱՍՄ) Բարձրագույն գործադիր կոմիտեի (ԲԳԿ) 1967 թ. օգոստոսի 4-ի նիստում պրեզիդենտ Նասերը նկատի ունենալով անցած ժամանակներում եգիպտական ղեկավարության մեջ նկատվող պառակտողական երևույթները, դրանք բնութագրում էր հետևյալ կերպ։ «Հեղափոխությունից հետո Հեղափոխության Ղեկավար Խորհուրդը[7] սկզբնական շրջանում գործում էր նորմալ մթնոլորտում։ Բայց դրանից հետո առաջ եկան գործոններ և պետությունը պառակտվեց բազմաթիվ չհայտարարված կուսակցությունների՝ Աբդել Հաքիմի կուսակցություն, Զաքարիայի կուսակցություն, Սադաթի կուսակցություն, Ալի Սաբրիի կուսակցություն...։ Աբդել Հաքիմը ցանկանում էր ինքն անձամբ ղեկավարել բանակը, Զաքարիան ցանկանում էր ինքն անձամբ ղեկավարել ոստիկանությունը, Սադաթը ցանկանում էր ինքն անձամբ ղեկավարել Ազգային ժողովը, Ալի Սաբրին ցանկանում էր ինքն անձամբ ղեկավարել Սոցիալիստական միությունը[8]։ Նասերի կողմից կատարված այս տարաբաժանումը, իհարկե, պայմանական է։ Հարցն այն է, որ հի-

շատակված չորս անձերից երեքը, ըստ էության, նույն քաղաքական ուղղության հետևորդներն էին և նրանց ետև կանգնած խմբակցությունների քաղաքական հավակնությունների տարբերությունները չէ որ նրանց բաժանում էին, այլ անձնական հավակնությունները։ Եթե Ազգային ժողովի նախագահ Մուհամմեդ Անվար Սադաթը թույլ հեղինակության պատճառով մշտապես հակվում էր զինված ուժերի գլխավոր հրամանատար և փոխպրեզիդենտ Աբդել Հաքիմ Ամերի կողմը[9] և, հետևաբար, տվյալ իրադրության մեջ մեծ ազդեցությունների չէր կարող հավակնել, ապա Ամերը և ներքին գործերի մինիստր Զաքարիա Մոհի էդ-Դինը, որոնց ձեռքում էր գտնվում պետության ռեպրեսիվ ապարատը՝ բանակը, ոստիկանությունն ու անվտանգության ուժերը, առանձին-առանձին ձգտում էին հաստատել անձնական վերահսկողություն պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգի վրա։ Ընդ որում պետք է նշել, որ Ամերի հենարանը գլխավորապես բանակն էր և սեփական հեղինակությունը՝ որպես պետության երկրորդ մարդ։ Իսկ Զ. Մոհի էդ-Դինի հենարանն էին ոստիկանությունը, անվտանգության ուժերն ու պետական ապարատի տեխնոկրատական բյուրոկրատիան։ Սա այսպես էր։ Բայց, մեղմ ասած, քիչ համոզիչ կլինի, եթե մենք պնդենք, թե վերոհիշյալ տարաբաժանումը ամբողջապես արտահայտում է եգիպտական ղեկավարության մեջ 1967 թ. գոյություն ունեցող պառակտումը և առավել ևս եգիպտական քաղաքական ուժերի տեղաբաշխումը։ Հարցն այն է, որ այդ ժամանակ, հիմք ունենալով ռազմական ծանր պարտության ստեղծած բարդ իրադրությունը, եգիպտական հասարակական և պետական համակարգի ներսում արագ թափ ստացավ տարբեր խավերի քաղաքական բևեռացումը։ Այս իրադրության մեջ վճռական դերը պատկանում էր պետական կառավարման ապարատին։ Բայց, ինչպես նշում են Ի. Պ. Բելյանն ու Ե. Մ. Պրիմակովը, այդ ապարատը «...հեռու էր ամենահուսալի մեխանիզմը լինելուց, որն ի վիճակի էր ապահովելու երկրի անկախությունը»[10]։

Եգիպտական վարչակազմի ընդերքում Գ. Ա. Նասերի վարած ներքին և արտաքին քաղաքականությանը ընդդիմադիր գլխավոր ուժը 1967 թ. հունիսին, անկասկած, զինվորական վերնախավն էր՝ մարշալ Ա. Հ. Ամերի գլխավորությամբ։ Եթե հունիսի 9-ի և 10-ի իրադարձությունները[11] օգնեցին Գ. Ա. Նասերին և առաջադիմական ուժերին ջախջախել արդեն հեղինակազրկված զինվորական այդ ընդդիմադրությունը, ապա ետպատերազմական բարոյական հուսալքության, օրավուր աճող դժվարությունները աջ ուժերի համար պարարտ հող եղան արագորեն

քաղաքացիական ընդդիմադրություն ստեղծելու համար։ Պետք է շեշտել, որ այդ ընդդիմադրությունը, որի ետևում կանգնած էին եգիպտական բուրժուազիան, կալվածատերերը, գյուղական հարուստները, արաբական և միջազգային հետադիմությունը, թեև նպատակի առումով միասնական, կազմված էր հիմնականում տակտիկական երկու ուղղությունների հետևորդներից։ Ըստ այդ երկու ուղղությունների գործողությունների մեթոդների, նրանցից մեկին կարելի է անվանել բացահայտ ընդդիմադրություն, մյուսին՝ քողարկված։

Եթե հեղինակազրկված զինվորական ընդդիմադրության պարագլուխ Ա. Հ. Ամերը հունիսյան պարտության պատճառները տեսնում էր Եգիպտոսի՝ ԱՄՆ-ի հետ ունեցած վատ հարաբերությունների մեջ և Նասերին մեղադրում էր դրա համար, միաժամանակ նրան հորդորելով որևէ ձևով համաձայնության գալ ԱՄՆ-ի հետ,[12] ապա բացահայտ ընդդիմադրությունը, որի գլուխ կանգնեցին փոխպրեզիդենտ Զ. Մոհի էդ-Դինը և պլանավորման մինիստր Աբդել Մոնեյմ Կայսունին, շղարշելով իր նպատակները սոցիալիստական տերմինաբանությամբ, բացահայտորեն պահանջում էր երկրի քաղաքական և տնտեսական ամբողջ համակարգի «նորացում»։ Նրա ներկայացուցիչները մամուլում դաժան քննադատության էին ենթարկում երկրի համարյա բոլոր պետական, տնտեսական և հասարակական հաստատությունները։ Այս հանգամանքը առավելապես պարզ երևում է 1967 թ. օգոստոսի 3—4-ի ԱՄՄ-ի ԲԳԿ-ի նիստի արձանագրությունից։ Նիստը հրավիրված էր անձամբ Նասերի պահանջով և օրակարգում ուներ վարչակարգի գնահատման հարցը։ Նիստի ընթացքում Նասերը, պատճառաբանելով տնտեսության զարգացումն աշխուժացնելու անհրաժեշտությունը, առաջարկեց որոշ արտոնություններ տալ մասնավոր հատվածի առանձին ճյուղերին, բայց ընդգծեց, որ նման միջոցառումները չպետք է ազդեն երկրի զարգացման հիմնական՝ սոցիալիստական ուղղության վրա[13]։ Ինչպես երևում է, չկարողանալով կամ, ավելի ճիշտ, չցանկանալով ըմբռնել Նասերի առաջարկության բուն իմաստը, Զ. Մոհի էդ-Դինը պարզորոշ կերպով հակադրվեց պրեզիդենտին։ Նա առաջարկություն մտցրեց երկրում հաստատել «բաց համակարգ». «Ես գտնում եմ, որ մեր համակարգը պիտի լինի բաց համակարգ, որ ընտրությունները լինեն բաց և ոչ ուղղություն տրվող»[14]։ Միաժամանակ նա աներկմտորեն հասկանալ տվեց, որ «բաց համակարգ» ասելով ինքն ի նկատի ունի նաև երկրի դռների բացումը օտարերկրյա կապիտալի առջև[15]։ Զ. Մոհի էդ-Դինը վճռականորեն արտահայտվեց եգիպտական բուրժուազիայի և կալվածատերերի ունեցվածքի բռնա-

գրավումների և, մասնավորապես, Ավատատիրության վերացման հանձնաժողովի միջոցառումների դեմ[16]։ Երեսպաշտորեն իր մտահոգությունն արտահայտելով երկրում դժվարությունների ծավալման նկատմամբ, նա ասում էր «...մենք չենք կարողանա պետական հատվածում մարդկանց ապահովել լրիվ զբաղվածությամբ։ Դրա համար մենք պետք է թույլատրենք մասնավոր հատվածին ավելի մեծ չափով վարի իր գործունեությունը և մասնակցի մեր հասարակության աշխատանքային զբաղվածության պատասխանատվության մեջ»։ Շարունակելով իր ելույթը ի պաշտպանություն եգիպտական բուրժուազիայի, նա պնդում էր, որ «...ոչ մի խավ (եգիպտական հասարակության —Ե. Ա.) չպետք է զգա, որ նա չունի իրավունքների և պարտականությունների հավասարություն, ինչպես մյուս խավերը։ Ես ի նկատի ունեմ ազգային կապիտալի խավը, քանի որ նա շարունակական հարձակումների է ենթարկվում Սոցիալիստական միության (ԱՍՄ—Ե. Ա.) ղեկավարության կողմից, որը նրան դարձնում է անկայուն որի հետևանքով էլ հասարակությունն է դառնում անկայուն»[17]։ Այսպիսով, Զ. Մոհի էդ-Դինը և նրա ետևում կանգնած պետական բյուրոկրատիան, բուրժուազիան և կալվածատերերը պահանջում էին տնտեսության մեջ ազատություն տալ եգիպտական մասնավոր կապիտալին ծավալելու իր գործունեությունը առանց որևէ սահմանափակման և վերացնել օտարերկրյա կապիտալի ներթափանցումը խոչընդոտող բոլոր արգելքները։ Իսկ ընդհանրապես բացահայտ ընդդիմադրությունը, ըստ էության, հանդես էր գալիս ընդդեմ Եգիպտոսի սոցիալիստական կողմնորոշման և ԱՄՆ-ի հետ հարաբերությունների վերանայման օգտին[18]։

Անհրաժեշտ է ընդգծել, որ վերոհիշյալ նիստի ժամանակ Նասերի ներքին և արտաքին քաղաքականության պաշտպանությամբ և եգիպտական հեղափոխության նվաճումների պահպանության օգտին առավել վճռականորեն արտահայտվում էր միայն ԱՍՄ-ի գլխավոր քարտուղար Ալի Սաբրին[19]։ ԱՍՄ-ի ԲԳԿ-ի մնացած անդամները՝ Հ. Շաֆիին, Սիդկի Սուլեյմանը, Ա. Սադաթը և մյուսները հիմնականում խուսանավում էին։ Ի դեպ, Սադաթը, որն այդ ժամանակ արդեն կորցրել էր իր հովանավորին, նիստի ժամանակ ջանքեր էր թափում Նասերի նկատմամբ իր հավատարմությունը հավաստելու համար։ Այսպես, նա առարկեց Զ. Մոհի էդ-Դինին Ավատատիրության վերացման հանձնաժողովի միջոցառումների գնահատման հարցում, ասելով, որ «բռնագրավումները ընդհանուր առմամբ սխալ չէին»[20]։ Միաժամանակ զգալով, քամին որ կողմից է փչում, նա «վճռականորեն» դեմ արտահայտվեց Նասերի այն առա-

ջարկին, որը պարունակում էր երկու՝ կառավարող և ընդդիմադիր կուսակցությունների ստեղծման գաղափար։ Սադաթը գտնում էր, որ «դա կնշանակի արձակել շներին, որոնք կուզեն իշխանությանը գզել»[21]։ Կուսակցությունների նկատմամբ այս կարծիքն ուներ Սադաթը 1967 թ. օգոստոսին...։ Նա մի ուրիշ «կարծիք» էլ ուներ, որը, ճիշտ է, տրամաբանորեն «մի քիչ» անհարթ էր, բայց ենթադրվում էր, որ հաճելի կլիներ նրան, ում որ ուղղված էր։ Այն վերաբերում էր վարչակարգի գնահատման հարցին։ «Իմ կարծիքով... ամբողջ համակարգը փուլ եկավ հունիսի 9-ին և 10-ին, բայց այն վերականգնեցին մասսաները, պահանջելով միայն Աբդել Նասերի վերադարձը որպես պրեզիդենտ»[22]։

Վարչակարգի քաղաքական և տնտեսական կողմնորոշման շուրջը Եգիպտոսի ղեկավարության մեջ առաջադիմական ուժերի և բացահայտ ընդդիմադրության միջև ընթացող պայքարը շարունակվեց մինչև 1968 թ. մարտը այն պատճառով, որ Նասերը երկար ժամանակ տատանվում էր վճռական որոշում կայացնել։ Այդ ընդդիմադրությանը հարված հասցնել նա որոշեց միայն բանվորների և ուսանողների փետրվարյան ելույթներից հետո[23]։ Օգտագործելով նրանց դժգոհությունը հունիսյան պարտության որոշ մեղավորների նկատմամբ կայացված մեղմ դատավճիռներից, ցուցարարների մեջ թափանցած աջ տարրերը պահանջում էին պետական «որոշ» կարևորագույն հաստատությունների «վերակառուցում»[24]։ Առայժմ՝ «որոշ» և առայժմ՝ «վերակառուցում»։ Մարտի 20-ին Նասերը վերակազմեց կառավարությունը, որից հեռացվեցին Զ. Մոհի էդ-Դինը և Ա. Մ. Կայսունին։ Այս վերակազմումը, ցավոք, չհանգեցրեց առաջադիմական ուժերի դիրքերի ամրապնդմանը երկրի ղեկավարության մեջ։

Անտարակույս, երեք հիմնական իրողությունների գիտակցման վրա էր հիմնված քողարկված ընդդիմադրության գործունեության աշխուժացումը. 1) որ Նասերը, հենվելով իր բացարձակ հեղինակության և ժողովրդական լայն զանգվածների աջակցության վրա, ի վիճակի է ջախջախիչ հարված հասցնել իր քաղաքական գծին դեմ կանգնող որևէ խմբակցության (այստեղից՝ բացահայտ առճակատման անհեռանկարայնությունը), 2) որ նա ղեկավարության մեջ ինչ-որ ձևով, գիտակցված, թե ինքնաբերաբար, աշխատում էր աջերի և ձախերի միջև ազդեցության հավասարակշռություն պահպանել (այստեղից՝ կարելի է որոշակի նպատակների համար «չափավոր» գործել), 3) որ նա աներեր էր արտաքին քաղաքական կողմնորոշման ու գոյություն ունեցող հասարակական-քաղաքական հաստատությունները պահպանելու հարցերում (այստեղից՝ պետք է գործել այնպիսի ոլորտներում, որոնք բացահայտորեն չառընչ-

վեն քաղաքական նպատակադրվածությանը)։ Ելնելով այս իրողություններից եգիպտական բարձրագույն ղեկավարության և պետական ապարատի այն աջ տարրերը, որոնք համարձակություն չէին ունեցել միանալու բացահայտ ընդդիմադրությանը և գործում էին հեղափոխական բնույթի պետական կարևորագույն որոշումների իմաստը նենգափոխելու, դրանք անգործնական դարձնելու և հետադիմությանը հովանավորելու միջոցով, իրենց ջանքերը ամբողջապես կենտրոնացրեցին վարչակարգի տնտեսական հիմքերի քայքայման վրա։ Բայց, նախքան այս խնդրին անդրադառնալը, մի երկու խոսք այդ ընդդիմադրության մասին։

1967-ին Եգիպտոսում առաջացած ընդդիմադրություններից թերևս միայն զինվորական ընդդիմությունն էր, որ կրում էր քիչ թե շատ կազմակերպված բնույթ։ Ինքնըստինքյան պարզ է, որ եթե այդ ընդդիմադրությունը նպատակ ուներ դավադրության միջոցով հեղաշրջում կատարել, ապա պետք է ունենար նաև կազմակերպական ինչ-որ ձև։ Այլ էր քաղաքական բացահայտ և քողարկված ընդդիմադրությունների բնույթը։ Եթե նպատակադրվածությունը միացնում էր նրանց, ապա տվյալ իրավիճակում գործելակերպի հարցը բաժանում էր։ Եթե Զ. Մոհի էդ-Դինը գերագնահատեց հունիսյան պարտության ստեղծած հնարավորությունները՝ փոխելու երկրի զարգացման ուղղությունները և թերագնահատեց զինվորական ընդդիմադրությանը հասցված ջախջախիչ հարվածի նշանակությունը, ապա այնպիսի ղեկավար գործիչներ, ինչպիսիք էին Ա. Սադաթը, Հ. աշ-Շաֆիին, Մահմուդ Ֆավզին, Ս. Մարեյը և ուրիշներ, ավելի «զգաստ» էին գնահատում ստեղծված իրադրությունը, թե՛ պայմաններ չտեսնելով առճակատման համար, թե՛, թերևս, գերադասելով խաղաղ ճանապարհով կերպարանափոխել Նասերի վարչակարգը։ Սրանք սկսեցին ամրապնդվել արդեն 1968 թ. մարտից հետո՝ ի դեմս պետական ապարատում հզոր ուժ դարձած տեխնոկրատական բյուրոկրատիայի ներկայացուցիչների և այլոց մեծ մասի։ Դրանք բարձրաստիճան գործիչներ էին, տնտեսական հաստատությունների տնօրեններ, նահանգապետեր և այլն, ինչպես Ա. Ա. Հեգազին, Ա. Հ. Զաքին, Մ. Սալիմը, Մ. Ա. Հասանը, Ա. ալ-Կասաբին, Ֆ. ալ-Բակուրին, Ա. Յումուսը, Մ. Իսմայիլը, Մ. Աբու Յաֆիան, Մ. Հ. Մահմուդը, Յու. Մակկադին, Մ. Շադիդը և ուրիշներ։ Անհրաժեշտ է նշել, որ Նասերին նվիրված որոշ գործիչների գործունեությունը այդ ժամանակներում փաստորեն ջուր էր լցնում քողարկված ընդդիմադրության ջրաղացին։ Այդ գործիչներից էին Ա. Սիդկին, Ս. Սուլեյմանը, Մ. Ա. Մարզիբանը, Մ. Հ. Հեյքալը և ուրիշներ, որոնք ժամանակին չկարողացան ըմբռնել քողարկված ընդդիմադրութ-

յան նպատակները, ծառայեցին նրան որպես գործիքներ, իսկ երբ իշխանությունն անցավ այդ ընդդիմադրությանը, ոմանք հասկանալով հեռացան նրանից, ոմանք էլ հեռացվեցին ավելի վաղ, քան գլխի կընկնեին, որ իրենց նասերական սկզբունքներն այլևս պիտանի չեն նոր իշխանությանը։ Բոլոր դեպքերում, նասերական վարչակարգի մեջ «կենտրոնից մի քիչ աջը» մեծ ուժ էր ներկայացնում և եգիպտական հեղափոխության «ճահիճն» էր։ Միանգամայն սխալ կլիներ ասել, թե քողարկված ընդդիմադրության ներկայացուցիչները միասնական գաղափարաքաղաքական ուղղության կողմնակիցներ էին։ Մի կողմ թողած այդ ընդդիմադրության առանձին հզոր դեմքերի անձնական հավակնությունները, նրանք արտահայտում էին եգիպտական բուրժուազիայի և կալվածատերերի տարբեր քաղաքական հոսանքների ձգտումները։ Տվյալ իրադրությունում, սակայն, նպատակը միասնական էր՝ քայքայել և կերպարանափոխել Նասերի վարչակարգը։

Նասերի քաղաքական գործելակերպի մշտական գիծը՝ հավասարակշռություն պահպանել իշխանության մեջ աջ և ձախ տարրերի միջև, դրսևորվեց նաև այս ժամանակներում։ Պետական ապարատի տեխնոկրատական բյուրոկրատիայի հզորացումը զուգորդվեց երկրի հասարակական-քաղաքական հաստատություններում Նասերի սոցիալ-քաղաքական սկզբունքներին հավատարիմ գործիչների դիրքերի ուժեղացումով։ Դրանք էին Ա. Սաբրին, Դ. էդ-Դին Դաուդը, Ա. Մ. Աբու ան-Նուրը, Լ. Շուկեյրը, Շ. Գոմաան, Ս. Շարաֆը, Ֆ. ադ-Դիբը, Ա. Հովեյդան, Մ. Ֆաիկը, Ֆ. Ա. Քարիմը, Ս. Զահիդը, Հ. Սաիդը, Ա. Մ. Ֆարիդը և ուրիշներ։ Սրանք հիմնականում հասարակական-քաղաքական աշխատանքի ոլորտի գործիչներ էին՝ ԱՍՄ-ի, Ազգային ժողովի ղեկավարներ, տեղեկատվության, պրոպագանդայի և հասարակական գործերի հաստատությունների տնօրեններ և այլն։ Սրանց մասին չի կարելի ասել թե համախումբ էին, միասնական նպատակով տոգորված։ Անկախ այդ բանից, սակայն, սրանց դիրքերը շատ ուժեղացան պետության քաղաքական մարմիններում 1967 թ. հետո և դարձան միակ իրական ուժը, որ Նասերի վարչակարգի ներսում ի վիճակի էր հակադրվել օրեցօր հզորացող բյուրոկրատական բուրժուազիային։

Ինքնըստինքյան բնական է, որ պարտությունից հետո եգիպտական ղեկավարությունն անցավ երկրի պետական հասարակական և տնտեսական հաստատությունների վերակառուցմանը, որն Իսրայելի հետ պատերազմական դրության շարունակման պայմաններում պետք է համապատասխաներ ռազմական ժամանակաշրջանի պահանջներին։

1968 թ. «Մարտի 30-ի ծրագիրը» մշակվեց անձամբ Գ. Ա. Նասերի կողմից հենց այդ նպատակով։ Բայց այդ ծրագիրը, դժբախտաբար, կրում էր ընդհանուր բնույթ, այն չէր կոնկրետացնում հատկապես պետության տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը։ Եվ զարմանալի չէ, որ այդ փաստաթղթի ընդունումից անմիջապես հետո պետական գործունեության հենց այդ ոլորտները իրենց վրա ընդունեցին աջ ուժերի լայն հարձակման առաջին գրոհները։ Եգիպտական մամուլը հեղեղվեց «տնտեսական համակարգի հիմունքների վերանայման» ու «իրապաշտական տնտեսական քաղաքականության վարման անհրաժեշտության» վերաբերյալ հրապարակումներով։ Ի՞նչ էին ի նկատի ունենում «իրապաշտական» ասելիս։ «Ալ-Ահրամ» թերթի տնտեսական մեկնաբան Իբրահիմ Նաֆիին առաջարկում էր. «Ազատել արտաքին առևտուրը նրա վրա դրված սահմանափակումներից...անհրաժեշտ է մասնավոր հատվածին տալ իր լրիվ հնարավորությունը արտահանության մեջ, վերացնելով նրա ճանապարհին գտնվող խոչընդոտները և հատկացնելով անհրաժեշտ արտոնությունները։ Վերանայել օտարերկրյա կապիտալ ներդրումների դերն ընդհանրապես և արաբականինը՝ մասնավորապես[25]։ Այս պահանջները ավելի մանրամասնորեն շարադրվում էին որոշ բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներում։ Ֆինանսների մինիստր Աբդել Ազիզ Հեգազին պահանջում էր տնտեսական կառավարման ապակենտրոնացում «...բազմաթիվ կենտրոնական ապարատների դերի սահմանափակման..., տեղական վարչության համար աջակցության և հաջողության բոլոր հնարավորությունները ընձեռելու» միջոցով[26]։ Մատակարարման մինիստր Մ. Ա. Մարզիբանը իր ձայնն էր միացնում նրանց, ովքեր պահանջում էին «մոնոպոլիաների վերացում», այսինքն՝ պետական հատվածի արտաքին առևտրի և ֆինանսավորման ոլորտներում ունեցած մենաշնորհի վերացում։ Եվ այդ պետք է արվեր «...ներքին առևտրում ազգային կապիտալի դերի թեթևացման ու տնտեսական զարգացման ծրագրի իրագործման մեջ մասնավոր հատվածի մասնակցությունը շահագրգռելու նպատակով»[27]։ Այս միտքն ավելի մանրամասն շարադրում է նույն Հեգազին. «Իմ կարծիքով, ամենակարևոր կետը, որի վրա պետք է սևեռվի մեր ուշադրությունը, սոցիալիստական պրակտիկայի միջոցառումների վերանայումն է, հատկապես պետական և մասնավոր հատվածների վերաբերյալ, վերջինիս տրամադրելով շարժման ազատություն արտադրության, ֆինանսավորման և արտահանության մեջ»[28]։ Այսինքն՝ կապիտալիստներին պետք է հնարավորություն տալ ներդնել իրենց կապիտալները որտեղ նրանց հարմար է, հաշվի չառնե-

լով համաշգային շահերը։ Այդ նպատակի համար դրամատները պետք է նրանց առատորեն ֆինանսավորեն, իսկ արտահանման կազմակերպությունները չխոչընդոտեն նրանց կողմից օտարերկրյա ընկերությունների հետ ուղղակի հարաբերությունների հաստատմանը։ Այդ նշանակում էր նաև տնտեսության զարգացման պլանային սկզբունքի խախտում, գների նկատմամբ պետական վերահսկողության, սպառողին իսկապես անհրաժեշտ ապրանքների առաջարկի վերացում, որը դուռը լրիվ կբացեր սպեկուլյանտների առջև և այլն։ Իր հերթին, տնտեսության և արտաքին առևտրի մինիստր Հ. Ա. Զաքին հանդես էր գալիս օտարերկրյա կապիտալ ներդրումների շահագրգռման օգտին[29], իսկ նրա ենթական՝ Եգիպտոսի արտաքին առևտրի վարչության պետ Մ. Շադիդը կոչ էր անում դրա համար ստեղծել ներքին «անհրաժեշտ մթնոլորտ»[30]։

Ինչ վերաբերում է Եգիպտոսի տնտեսության պետական հատվածին, ապա այն ուղղակի մեղադրվում էր «անշահութաբերության» և «ձախողման» մեջ։ Վերը հիշատակված Մ. Շադիդը և ուրիշները պահանջում էին պետական հատվածի այն ձեռնարկությունների գործերի վերանայում, «որոնց ձախողումն արդեն հաստատված է» զարգացման և տեղական սպառման ու արտահանության ապրանքների արտադրության հարցերում իրենց դերի կատարման մեջ։ Նրանք պահանջում էին կա՛մ վերացնել այդ ձեռնարկությունները, կա՛մ էլ վաճառել մասնավոր անձանց։ Շադիդը գտնում էր, որ պետական հատվածի գործունեության ոլորտները անհրաժեշտ է ամբողջովին նեղացնել «ծանր և ստրատեգիական արդյունաբերության» ձեռնարկություններով, որոնք պահանջում են խոշոր կապիտալներ երկարաժամկետ ներդրման համար, ինչը չի կարող իրագործել մասնավոր հատվածը։ Շադիդը գտնում էր, որ մնացած ճյուղերը պետք է տրամադրվեն այդ նույն մասնավոր հատվածին[31]։ Այս բոլորը նշանակում է տնտեսության մեջ պետական հատվածի որոշիչ դերի վերացում, վերադարձ պետական կապիտալիզմի, երկրի տնտեսական զարգացումը նորից «փոքր» արդյունաբերությունից սկսում և այլն։

Ինչ ասես չէին պահանջում հետադեմ գործիչները, տնտեսագետները ու հրապարակախոսները «նորացման» ու «վերակառուցման» անվան տակ։ Ե՛վ պետական հատվածի որոշ ձեռնարկություններին տրվող դոտացիաների վերացում, և՛ «վստահության վերականգնում» ֆինանսավորողի և հարկային իշխանությունների միջև, և՛ ոչ իրապաշտական» մաքսային դրույքների վերացում և այլն, և այլն։ Խոսելով այդ ժամանակների մասին Ա. Գ. Բակլանովը միանգամայն իրավացիորեն նշում է, որ «ներքին հետադիմությունը... նորից անցավ հարձակման»[32]։

2—935

ՀԱՅԿ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ

Անտարակույս, 1968 թ. գարնանը և ամռանը Եգիպտոսում տեղի էին ունենում էական փոփոխություններ։ Կառավարության վերակազմմանը և մայիսին «Մարտի 30-ի ծրագրի» հաստատմանը հաջորդեցին, այսպես կոչված, հունիսյան բարեփոխումները և հուլիսին անցկացված ԱՍՄ-ի ընտրությունները, որոնք, ի դեպ, մեծ նշանակություն չունեցան այդ կազմակերպության գործունեության աշխուժացման համար[33]։ Անհրաժեշտ է համառոտակի անդրադառնալ հունիսյան բարեփոխումներին, որովհետև դրանք, նպատակ ունենալով ամրապնդել օտարերկրյա զավթիչների դեմ պայքարի նյութական հիմքը «ազգային եկամտի ավելացումով», «բոլոր վարչական և տնտեսական ճյուղերում աշխատանքի համար առողջ մթնոլորտի ստեղծումով արտադրության, սպառման և արտահանման միջև հավասարակշռություն» մտցնելով, պետական բյուջեում «դեֆիցիտի վերացումով» և «եկամուտների բաշխման մեջ արդարության» հաստատումով[34], այնուամենայնիվ, որոշակի դարձավ Նասերի կառավարության էական նահանջը աջ ուժերի ճնշումների առջև, որը հետագայում նպաստեց նրանց դիրքերի ամրանալուն։

Հունիսյան բարեփոխումները ընդգրկում էին վարչական, տնտեսական և ֆինանսական ասպարեզները։

Վարչական ասպարեզում լուծարքի ենթարկվեցին մի քանի հին և ստեղծվեցին որոշ նոր պետական ու տնտեսական կառավարման մարմիններ, կրճատվեցին կենտրոնական և տեղական պետական ապարատի բավականաչափ հաստիքներ, դիվանագիտական կորպուսը։ Տեղական վարչության դերը մեծացվեց, որը, տվյալ դեպքում, նշանակում էր իշխանության ապակենտրոնացման ուժեղացում։

Տնտեսական ասպարեզում սահմանափակվեցին և պարզվեցին տնտեսական միավորների կապերը պետական վերադաս մարմինների հետ պլանավորման, ֆինանսավորման և այլ բնագավառներում։ Ամեն մի տնտեսական միավոր պետք է գործեր միայն առևտրական հիմքի վրա։ Բացի կարևորագույն տնտեսական միավորումներից, որոնք պետության համար ունեին «ստրատեգիական նշանակություն», մյուս բոլոր միավորումներից պահանջվում էր գործով ցույց տալ իրենց կենսունակությունը։ Վնասով աշխատող ձեռնարկությունները ենթակա էին լուծարքի։

Ֆինանսական ասպարեզում թուլացվեց պետության վերահսկողությունը պետական հատվածի ֆինանսական գործունեության վրա։ Դրամատնային վարկերի և ուրիշ ֆինանսական գործառությունների բնագավառում վերացվեցին պետական հատվածի առավելությունները մասնավոր հատվածի նկատմամբ։ Դրամատների վարչական խորհուրդները

ստացան այս կամ այն ձեռնարկության տնտեսական դրությունը գնահատելու և նրա ֆինանսավորումը շարունակելու հնարավորության որոշման իրավունքներ։ Նախատեսվում էր, որ հետագայում «տնտեսական միավորներն աշխատեն կառավարական ֆինանսական հրահանգներից զերծ շրջանակներում»։ Մասնավոր հատվածի ձեռնարկատերերը հնարավորություն ստացան իրագործել արտահանման գործարքները օտարերկրյա ընկերությունների հետ, շրջանցելով պետական առևտրական ընկերություններին։ Այն մասնավոր ձեռնարկությունները, որոնք ունեին արտահանման գործարքներ, իրավունք ձեռք բերեցին դրանց շնորհիվ ստացած կայուն վալյուտայով շահույթի որոշակի մասը պահել իրենց համար[35]։

Հարկավոր է նկատի ունենալ, որ հունիսյան բարեփոխումները հետևեցին արդեն շարժման մեջ դրված վարչական ապարատի վերակազմմանը և սոցիալ-տնտեսական քաղաքականության վերանայմանը։ Այսպես, հունիսի 4-ին մատակարարման մինիստր Մ. Ա. Մարզիբանը մինիստրական որոշումով լուծարքի ենթարկեց մատակարարման նահանգական կենտրոնները[36]։ Հասկանալի է, որ այս որոշումը առևտրականներին հնարավորություն տվեց, շրջանցելով պետական հատվածը, ձեռնամուխ լինել գործարքների՝ անմիջականորեն արտադրական ձեռնարկությունների և ընկերությունների հետ։ Այլ խոսքով ասած, եթե մատակարարման նահանգական կենտրոնները նախկինում պլանաչափորեն ստանում և բաշխում էին որոշակի ապրանքների ֆոնդեր, ապա այժմ առևտրականների հայեցողությանն էր թողնվում ձեռք բերել ուզած ապրանքը, ուզած քանակով՝ անմիջականորեն արտադրական ձեռնարկություններից, որը նրանց հնարավորություն էր տալիս որոշել «պետքական» և «ոչ պետքական» ապրանքները և նրանց գները։

Ներքին գործերի մինիստրությունն, իր հերթին, վարչական գծով հունիսի 10-ին որոշեց վերանայել այն գյուղական և ավանային օմդաների և մաշյախաների[37] գործերը, որոնք հեռացվել էին իրենց պաշտոններից Ավատատիրության վերացման հանձնաժողովի կողմից[38]։ Խոսքը վերաբերում է թվով 939 օմդաների և մաշյախաների, որոնք «բոլորը մերձավոր և բարեկամական կապեր ունեին ավատատիրական ընտանիքների հետ»[39]։

Համառոտակի պետք է անդրադառնալ նաև պրեզիդենտական մի որոշման էությանը, որն ուներ սոցիալ-քաղաքական կարևոր նշանակություն։ Հունիսի 6-ին «ալ-Ահրամը» հրապարակեց «բանվոր» և «գյուղացի» տերմինների պրեզիդենտական նոր սահմանումը։ «Բանվոր. այդ

նա է, ով զբաղվում է ձեռքի կամ մտավոր աշխատանքով արդյունաբերության, կամ գյուղատնտեսության, կամ սպասարկման ոլորտում և ապրում է այդ աշխատանքից ստացած եկամտի հաշվին։ Նա իրավունք չունի անդամագրվել արհեստավորական արհմիություններին, չպետք է լինի համալսարանների, բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ ռազմական քոլեջների շրջանավարտ։ Դրանցից բացառություն են կազմում նրանք, ովքեր իրենց կյանքն սկսել են որպես բանվոր ու ձեռք են բերել համալսարանական դիպլոմ, մնալով իրենց բանվորական արհմիությունում»։ Իհարկե այս սահմանումը որոշակի առումով «մեծ քայլ էր դեպի առաջ», եթե հաշվի առնենք, որ նախկին սահմանումը «բանվոր» էր համարում արհմիության անդամ լինողին և աշխատավարձ ստացողին[40]։ Այնուամենայնիվ, այս սահմանումը չէր վերացնում խառնաշփոթությունը աշխատավոր ժողովրդի կոնկրետ դասակարգի մեկնաբանման մեջ։ Եվ ընդհանրապես տարօրինակ է այդ տերմինը ձևակերպելու իրողությունը։ «Գյուղացի. այդ նա է, ով ընտանյոք հանդերձ, այսինքն՝ իր կնոջ և երեխաների հետ տիրում է ոչ ավելի քան տասը ֆեդանի...»։ Այս սահմանման վրա հարկավոր է մի փոքր ավելի ուշադրություն դարձնել։ Այո, «գյուղացի» նախկին հասկացությունը իր մեջ ներառում էր մինչև 25 ֆեդան ունեցողներին, որն իսկապես ձևական էր դարձնում գյուղացիներին ու բանվորներին ընտրական մարմիններում 50 տոկոսի հատկացման սկզբունքը[41]։ Եվ այս առումով, իրոք դա նույնպես «մեծ քայլ էր դեպի առաջ»։ Առկա է նաև մեկ տարի անց, 1969 թ. հուլիսին, հողատիրությունը մեկ անձի համար 50 և ընտանիքի համար 100 ֆեդանով սահմանափակելու բարեփոխումը։ Հենց այստեղ է, որ նորից պետք է ընդգծել այն հանգամանքը, որ Նասերի կառավարության հեղափոխական միջոցառումը անպայման զուգորդվում էր զիջումներով։ 1956 թ. գյուղատնտեսական կոոպերատիվների մասին № 317 օրենքը սահմանում էր, որ նրանց վարչական խորհուրդների անդամների 4/5 մասը պետք է կազմեն մինչև 5 ֆեդան հողատարածություն ունեցող գյուղացիները։ Այդ օրենքի տվյալ պահանջը «գյուղացի» հասկացության նոր ձևակերպումից հետո դարձավ աջ ուժերի հարձակման նպատակակետ։ Ի վերջո, այդ նույն հուլիսյան բարեփոխումների № 51 օրենքով սահմանվեց, որ վարչական խորհուրդների անդամների 4/5 մասը կազմում են մինչև 10 ֆեդան ունեցողները[42]։ Հասկանալի է, որ գյուղական հարուստները այդ խորհուրդներում կազմելու էին մեծամասնություն։ Դեռ ավելին, հետագայում անգրագետ գյուղացիներին արգելվեց լինել վարչական խորհուրդների անդամ։ Բայց չէ՞ որ նը-

բանք կազմում էին գյուղական բնակչության 96,4 տոկոսը։ Անցկացվեց նաև բավական թվով հողատերերի ունեցվածքի ապաբռնագրավում, վերացվեց իրացման կոոպերատիվ համակարգը, որը հնարավորություն տվեց գյուղական կապիտալիստներին տնօրինել աղքատ գյուղացիների բերքի իրացումը «նրանց համար կործանարար պայմաններում»[43]։

1968—1969 թթ. օրը օրի հետևից ընդունվում էին նոր որոշումներ՝ հօգուտ մասնավոր հատվածի գործունեության ընդլայնման։ Մասնավոր հատվածի գլխավոր «դժվարությունները» մինչև հունիսյան բարեփոխումները հումքի ձեռքբերումն էր, հարկադրական սոցիալական ապահովագրումները, ներմուծման-արտահանման գործողությունները և հարկերը։ Այժմ, հարաբերականորեն զուսպ հունիսյան բարեփոխումները գերատեսչական ղեկավարության ձեռքերում վերափոխվեցին մասնավոր հատվածի պահանջների բավարարման կոնկրետ հրահանգների։ Առաջինը, հումքի ձեռքբերման բարդությունները մեծապես նվազեցին։ Երկրորդը, սոցիալական ապահովագրության մեջ իրենց դերն ունեին զգալի տուգանքները, որոնց ենթարկվում էին այն մասնավոր ձեռնարկությունները, որոնք խախտում էին սոցիալական ապահովագրության մասին օրենքը։ Այժմ, մինիստրական որոշումով այդ տուգանքները մեծապես նվազեցվեցին, կամ, կարելի է ասել, վերացվեցին։ Այդ որոշումը ստուգող պաշտոնյայի հայեցողությանն էր թողնում. տուգանե՞լ այս կամ այն ձեռնարկատիրոջը օրենքի խախտման համար, թե՞ ոչ։ Այդ նույն օրենքում առաջ կային որոշ այլ հարկադրական պահանջներ, ինչպես ասենք, 18 տարեկանից ցածր աշխատողների պարտադիր ապահովագրումը։ Այժմ այդ ապահովագրումը թողնվում էր ձեռնարկատիրոջ կամեցողությանը՝ ապահովագրել ոչ բոլոր ենթավարպետներին, այլ՝ «ընտրովի»։ Երրորդը, արտահանման-ներմուծման գործարքներում պետական մենաշնորհի շրջանակները մեծապես նեղացվեցին։ Մասնավոր ընկերությունները իրավունք ստացան ազատորեն կապ ստեղծել օտարերկրյա ընկերությունների հետ։ Այս իրավունքը նրանց համար մեծ արժեք չէր ներկայացնի, եթե նրանք արտահանման գործարքներից չկարողանային ստանալ կայուն վալյուտայով որոշակի բաժին, որի համար նրանք իրավունք ձեռք բերեցին։ Չորրորդը, մասնավոր ընկերությունները հասան այն բանին, որ շահույթի որոշակի մասը ազատվեց հարկերից[44]։

Արդեն 1969 թ. վերջերին վերացվեցին մասնավոր ընկերությունների ֆինանսավորման հարցերում եղած բոլոր խոչընդոտները։ Դրա-

մատները արտոնյալ պայմաններով նրանց տրամադրում էին երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ վարկեր[45]։

Արտաքին տնտեսական կապերի մեջ նույնպես նկատվում էր Նասերի կառավարության զիջողականությունը հանդեպ եգիպտական աջ ուժերի։ Ճիշտ է օտարերկրյա կապիտալի ներգրավումը եգիպտական տնտեսության մեջ սկսվեց նեղ ոլորտներում[46], բայց դրա նույնիսկ խորհրդանշանական արժեքը ի վերջո օգտագործվելու էր աջ ուժերի կողմից 1971—1974 թթ. «բաց դռների» քաղաքականությունը հիմնավորելու համար։

Որպես արդյունք այս բոլորի մասնավոր հատվածի արտադրանքը 1968 թ. համեմատությամբ 1969 թ. աճեց 8 տոկոսով և կազմեց երկրի ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 25 տոկոսը։ Այդ արտադրանքի արժեքը 1968 թ. 292,3 մլն. եգիպտական ֆունտից 1969 թ. հասավ 313,6 մլն. եգ. ֆ.-ի։ Ինչ վերաբերում է մասնավոր արտահանման գործարքներին, ապա նրանց արժեքը ավելացավ այդ նույն ժամանակ 4,2 մլն եգ. ֆ-ից 11,2 մլն եգ. ֆ-ի, այսինքն՝ համարյա 264 տոկոսով[47]։ Բայց չէ՞ որ 1966—1967 թթ. ֆինանսական տարում այդ արտահանությունը կազմում էր միայն 1,9 մլն. եգ. ֆ[48], այսինքն երկու տարվա ընթացքում այն ավելացել էր մոտավորապես 600 տոկոսով։

Ինչու՞ եգիպտական ղեկավարությունը գնաց այդ բանին, մի՞թե պետական հատվածը չէր կարող ապահովել անհրաժեշտ տնտեսական աճ։ Այս հարցին անուղղակիորեն պատասխանում են հունիսյան բարեփոխումների հեղինակները, պատճառաբանելով տնտեսության մեջ ներդրման միջոցների սահմանափակությունը և մասնավոր կապիտալի ներգրավման անհրաժեշտությունը տնտեսության զարգացման աշխուժացման համար[49]։ Հասկանալի է, որ տանուլ տված պատերազմից հետո տնտեսական զարգացման մեջ կարող են առաջանալ թափի նվազեցման և անկման երևույթներ։ Բայց այդ դրությունից դուրս գալու ուղիների որոնման ժամանակ կարելի էր և անհրաժեշտ էր ելքը տեսնել անմիջականորեն պետական հատվածի զարգացման պայմանների ընդլայնման մեջ։ Չէ՞ որ սկսած 1956—1957 թթ. առաջին ազգայնացումներից մինչև 1967 թ. Եգիպտոսի տնտեսական աճը միջազգային ֆինանսական շրջանների գնահատականներով կազմել էր տարեկան 5 տոկոս, իսկ 1960—65 թթ. նույնիսկ 6,6 տոկոս[50] և դա այն ժամանակ էր, երբ պետական հատվածում կենտրոնացած էին արդյունաբերական հիմնական արտադրամիջոցների 85 տոկոսը, դրամատնային համակարգը, ամբողջ հաղորդակցական միջոցները։ Ի դեպ, վերոհիշյալ թվերը ցույց են տալիս, որ

աշերի պնդումը, թե իբր պետական հատվածը անշահաբեր է, միանգամայն զուրկ էր հիմքերից։

Ընդունելով հանդերձ, որ սխալ կլինի պնդել, թե Նասերի կառավարության վերոհիշյալ զիջումները եգիպտական աջ ուժերին համազգային մասշտաբով տնտեսական մեծ արժեք էին ներկայացնում և որ այս փուլում պետական հատվածը շարունակում էր մնալ երկրի գլխավոր տնտեսական հիմքի արտահայտիչը, եգիպտական տնտեսության զարգացմանը ուղղություն տվող որոշիչ ուժը, դրանց հետ մեկտեղ պետք է միանգամայն պարզորոշ ընդգծել, որ վերոհիշյալ զիջումներն ունեին կարևոր սոցիալ-քաղաքական նշանակություն եգիպտական հասարակության համար։ Պետական հատվածի ամրապնդման փոխարեն, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հատվածի ստեղծումից անցել էր ընդամենը մի 6—7 տարի և այն կարիք ուներ համակողմանի աջակցության՝ վերջնականապես դառնալու որպես տնտեսության բոլոր քիչ թե շատ կարևոր ճյուղերն ընդգրկող համակարգ, արտադրության կարգաբերված համընդհանուր մեխանիզմ, Նասերի կառավարությունը, դժվարին պայմաններում ձգտելով շտապ վերականգնել և ավելի արագացնել տնտեսական աճի թափը, չգտավ այդ նպատակով այլ գործուն միջոցներ, քան պետական հատվածի գլխավոր ընդդիմախոսի՝ մասնավոր հատվածի հզորության վերականգնման հնարավորությունների ընդլայնումը։

Եգիպտական միջին խավի տնտեսական հզորության մեծացումով և խոշոր բուրժուազիայի որոշ մասի տնտեսական կարողության վերականգնումով աջ ուժերը, առանց մեծ աղմուկի, սկսեցին ռազմական պարտության համար մեղադրել երկրի սոցիալ-տնտեսական համակարգի հիմունքները։ Եվ եթե 1968 թ. փետրվարյան ելույթների ժամանակ նրանք պահանջում էին իշխանության որոշ հաստատությունների վերակառուցում, ապա նույն թվի նոյեմբերյան ուսանողական հուզումների ժամանակ, օգտագործելով երիտասարդության որոշ մասի դժգոհությունը մերձավորարևելյան կոնֆլիկտի լուծման ձգձգման նկատմամբ, նրանք արդեն պահանջում էին «վերացնել դրոշմած լոզունգների հասարակությունը»։

Այս ժամանակներում ավելի հստակորեն սկսեցին երևալ պետական բյուրոկրատիայի այլասերման նշանները։ Այդ բանն ի նկատի ունենալով է, որ Նասերը մինիստրների խորհրդի նիստերից մեկի ժամանակ հայտարարեց, որ «... ներքին ճակատում անհրաժեշտ է առավելագույն ջանքեր գործադրել, որպեսզի վերջ տրվի կաշառակերությանը... բա-

նական չէ, երբ մենք գտնվում ենք սոցիալիստական վերափոխումների փուլում, թողնենք որոշ մարդկանց կուտակել մեծ հարստություններ՝ 300 կամ 400 հազար ֆունտ (եգ. ֆ—Ե. Ա.), միաժամանակ հնարավորություն տալով նրանց խուսափել հարկերից։ Այդ կնշանակեր, որ մենք մեր հասարակությանը հրում ենք դեպի ետ և ինքներս ենք ոչնչացնում այն, ինչին հասել ենք»[51]։ Նասերի այս խոսքերը վկայում են, որ նա գիտակցում էր եգիպտական հասարակության մեջ այդ ժամանակներում զարգացող դասակարգային բևեռացման պրոցեսի վտանգավոր բնույթը։

Անդրադառնալով քողարկված ընդդիմադրության գործունեությանը չի կարելի մի կողմ թողնել խորհրդանշական արժեք ունեցող այնպիսի մի փաստ, ինչպիսին էր 1969 թ. երկրորդ կեսից Ալի Սաբրու ժամանակավոր հեռացումը քաղաքական գործունեության ասպարեզից։ Նրա հուլիս ամսին արտասահման կատարած պաշտոնական այցելությունից վերադառնալուց հետո աջ ուժերի ջանքերով սարքվեց մի «գործ», որով նա մեղադրվում էր մաքսային կանոնների խախտման մեջ։ Չնայած այն բանին, որ «գործի» հետաքննությունը ցույց տվեց այդ մեղադրանքի անհիմնավորվածությունը, այնուամենայնիվ Ա. Սաբրին փաստորեն հեռացվեց ԱՍՄ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնից։ Իրենց պաշտոններից հեռացվեցին նաև ԱՍՄ-ի ղեկավարության կարևոր դեմքերից նրա քաղաքական կոմիտեի գրասենյակի վարիչ Մուստաֆա Նագին, հանրապետության նախագահության գլխավոր քարտուղար Աբդել Մագիդ Ֆարիդը, «Ախբար ալ-Յաում» շաբաթաթերթի վարչական խորհրդի նախագահ, իր ձախ հայացքներով հայտնի լրագրող Մահմուդ Ամին ալ-Ալիմը և ուրիշներ[52]։ Ի դեպ, այս «գործը» թխելու մեջ իր «վաստակն» ուներ թաքնված ընդդիմադրության գլխավոր գործիչներից մեկը՝ ֆինանսների մինիստր Ա. Ա. Հեգազին[53]։ Այս բոլորը նշանակում է, որ աջ ուժերը աշխատում էին բոլոր միջոցներով հեղինակազրկել կամ չեզոքացնել եգիպտական հեղափոխության նվաճումների պահպանմանը և խորացմանը նվիրված մարտիկներին։ Այս հանգամանքը կարևորություն է ներկայացնում հատկապես այն ֆոնի վրա, երբ այդ նույն ժամանակ էական փոփոխություններ էին տեղի ունենում եգիպտական բանակի, մասնավորապես նրա գլխավոր շտաբի հրամանատարական կազմի մեջ, որը համալրվեց աջ տարրերով, իսկ շտաբը սկսեց գլխավորել բրիգադային գեներալ Մ. Ահմեդ Սադեկը[54], որը հետագայում, 1971 թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ կարևոր դեր ունեցավ Սադաթի և Ալի Սաբրու խմբակցությունների միջև պայքարում բանակի դիրքորոշման մեջ։

Նասերը հավատարիմ իր սկզբունքին՝ հավասարակշռություն պահպանել երկրի քաղաքական ուժերի միջև, որոշ ժամանակ անց նորից հնարավորություն տվեց Ա. Սաբրուն շարունակելու իր քաղաքական գործունեությունը որպես ԱՄՄ-ի ԲԳԿ-ի անդամ և պաշտպանության գործերով պրեզիդենտի օգնական։ Բայց երբ Ալի Սաբրուն մեղադրելու ժամանակը գար, այս «գործը» մոռացության չէր տրվելու։

Նասերի մի շարք ելույթները ցույց են տալիս, որ նա միանգամայն որոշակի էր ըմբռնում եգիպտական հետադիմության գործունեության վտանգավոր բնույթը։ Բերենք մի առավել որոշակի ձևակերպված մեջբերում այդ միտքը հաստատելու համար.«...Բյուրոկրատական բուրժուազիան շատ դեպքերում ջանում է պետությունը կամ պետական հատվածը (եգիպտական տնտեսության—Ե. Ա.) դարձնել գործիք մասնավոր սեփականության ստեղծման համար (հարստությունների կուտակման համար—Ե. Ա.) կամ սաբոտաժի ենթարկելով պետական միջոցառումների անցկացումը, կա՛մ համագործակցելով մասնավոր հատվածի որոշ շահագործողական տարրերի հետ»[55]։ Այս խոսքերը, ինչքան էլ զարմանալի թվա, Նասերն արտասանել է 1968 թ. ապրիլին։ Դրանից հետո մենք տեսանք, որ ոչ միայն միջոցներ չեն ձեռնարկում այդ դրությունը շտկելու, այլև ընդհակառակն, այս պրոցեսը գնալով շարունակվում էր և, ի դեմս տեխնոկրատական բյուրոկրատիայի հզորացման, ավելի ընդլայնվում հետագայում։ Եվ այստեղ պետք է ասել հետևյալը. 1967 թ. հունիսից հետո արտաքին և ներքին քաղաքականության վարման մեջ դրանց համապատասխանեցման և հավասարակշռության սկզբունքը խախտվեց և Նասերի կողմից առաջնակարգությունը տրվեց Մերձավոր արևելքի կոնֆլիկտի լուծմանը (այս հանգամանքը պարզորոշ է դարձնում թեկուզ այն, որ 1967 թ. հունիսից հետո նրա ելույթները հիմնականում շոշափում էին արտաքին քաղաքական հարցերը), ԱՄՄ-ի և հասարակական-քաղաքական հաստատությունների գործունեությունը բևեռացվեց ժողովրդական զանգվածներին իսրայելական ագրեսիայի հետևանքների վերացման համար մոբիլիզացնելուն, իսկ տնտեսական կառավարման խնդիրները հիմնականում թողնվեցին պետական բյուրոկրատիայի վրա։ Այս բանում երկրորդական դեր չունեցավ նաև պրեզիդենտ Նասերի վատացող առողջական վիճակը։

Այսպիսով, 1967—1970 թթ. Եգիպտոսի ներքաղաքական իրադրությունը բնութագրվում է աջ ուժերի գործունեության ավելի ու ավելի ընդլայնումով և, հետևաբար, քաղաքական տարբեր հոսանքների տարանջատման պրոցեսի արագացումով։ Երկրի բարձրագույն ղեկավա-

րության մեջ աջ գործիչների, պետական ապարատում տեխնոկրատական բյուրոկրատիայի, պարազիտային բուրժուական տարրերի դիրքերի հզորացման, ընդհանրապես եգիպտական բուրժուազիայի տնտեսական կարողության ամրապնդման և ներքաղաքական իրադրության սրման պայմաններում պրեզիդենտ Նասերի վաղաժամ մահը վճռական նշանակություն ունեցավ եգիպտական հեղափոխության հետագա ընթացքի համար։ Մեր խոսքը եզրափակենք Ա. Գ. Բակլանովի Նասերական վարչակարգի զարգացման վերաբերյալ մի շատ դիպուկ բնութագրումով. «... Եգիպտոսի առանձնահատուկ պայմաններում իր բնույթով մանրբուրժուական եգիպտական վարչակարգի զարգացումը առաջադիմական սոցիալ-տնտեսական վերափոխությունների ուղիով հանգեցրեց վարչակարգի «բուրժուականացմանը»։ Նրա ղեկավարությունը, կամ ավելի ճիշտ այն խմբավորումը, որը Գ. Ա. Նասերի մահից հետո հաղթեց քաղաքական պայքարի ընթացքում, գլորվեց հասարակության շահագործողական ուժերի դիրքերը»[56]։

Е. А. АБГАРЯН

ВНУТРИПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ В ЕГИПТЕ В 1967—1970 гг.

В статье рассматриваются предпосылки усиления позиций правых сил на последнем этапе революционного развития Египта.

Несмотря на общеизвестные прогрессивные преобразования, которые происходили на вышеуказанном этапе, тяжелое военное поражение в ходе арабо-израильской войны в июне 1967 г. и возникшие в результате его сложные политические и экономические проблемы обусловили углубление внутриполитической борьбы в руководстве страны. Исходя из того, что открытые оппозиционные выступления некоторых высших политических группировок не дали желаемых результатов, египетская реакция на этом этапе сконцентрировала свои основные усилия на получении экономических уступок для частного сектора и для подрыва государственного сектора в стране. Наряду с другими действиями, направленными на ослабление основ революционного режима, реакционные силы Египта стремились к трансформации насеровского режима в соответствии с общественно-политической ориентацией эксплуататорских классов страны.

يرجانيك ابكاريان*

الوضع السياسي الداخلي فى مصر ١٩٦٧—١٩٧٠

يعالج المقال قضايا ظهور المقدمات الاساسية لازدياد نفوذ القوى اليمينية في المرحلة الاخيرة من الثورة المصرية. فعلى الرغم من التحولات التقدمية الشهيرة التي جرت في المرحلة المذكورة والهزيمة العسكرية الخطيرة فى حزيران ١٩٦٧ التي افرزت جملة من المشاكل والمصاعب السياسية والاقتصادية، اشتد كذلك الصراع السياسى الداخلي فى صفوف قادة البلاد. وبما ان المعارضة السياسية العلنية التى مارسها بعض القيادات السياسية لم تعط نتائجها المتوخاة فقد ركزت الرجعية المصرية قواها وجهودها لانتزاع المزيد من التنازلات الاقتصادية لصالح القطاع الخاص ولنسف اسس القطاع العام. فضلا عن ان تلك المجمات كانت ترمى الى اضعاف اسس وركائز النظام الثورى، فالقوى الرجعية في مصر هدفت لتحويل النظام الناصرى الى نظام اجتماعي وسياسى تسوده علاقات الاستغلال الطبقي في مصر.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Насер Г. А.*, Проблемы египетской революции, М. 1979, էջ 150, 158:

2 1 ֆեդանը = 0,42 հա։

3 *Насер Г. А.*, Проблемы египетской революции, էջ 156:

4 من محاضر اجتماعات عبد الناصر العربية، ١٩٦٧—١٩٧٠"، اعداد : عبد المجيد فريد، بيروت، ١٩٧٩، ص ١٥١.

5 *Брутенц К. Н.*, Освободившиеся страны в 70-е годы, М. 1979, էջ 68.

6. Նասերն ասում է, որ իր հանդեպ Ս. Հ. Ամերի գլխավորությամբ զինվորական ընդդիմադրությունը գոյություն է ունեցել 1962 թվականից։ Այդ ընդդիմադրության պահանջով Նասերը ստիպված է եղել 1962 թ. ստորագրել № 160 օրենքը, ըստ որի քաղաքացիական պետական ապարատը ամբողջապես ենթակայվել է զինված ուժերի հրամանատարությանը։

من محاضر اجتماعات عبد الناصر العربية، ١٩٦٧—١٩٧٠"، ص ١٠١، عصمت سيف الدولة، هل كان عبد الناصر ديكتاتورا؟، بيروت، ١٩٧٧، ص ٢٥٣.

Ժողովածուում զետեղված արաբերեն բոլոր ամփոփումները բնագրից թարգմանել է Պ. Հ. Սարաջյանը։

7. Հեղափոխության Ղեկավար խորհուրդ—այսպես սկսեց կոչվել Նասերի գլխավորած «Ազատ սպաներ» զինվորական գաղտնի կազմակերպության գործադիր կոմիտեն 1952 թ. հուլիսի 22-ից հետո։

8 "من محاضر اجتماعات عبد الناصر العربية و الدولية، ١٩٦٧—١٩٧٠" ص ٣٠٢.

9 محمد حسنين هيكل، خريف الغضب، بيروت، ١٩٨٣، ص ٨٢.

10 *Беляев И .П., Примаков Е. М.* Египет: время президента Насера, М. 1981, էջ 298:

11 1967 թ. հունիսի 9-ին և 10-ին Եգիպտոսում տեղի ունեցան ժողովրդական զանգվածային ցույցեր, որոնք պահանջում էին հրաժարական տված պրեզիդենտ Նասերի վերադարձը և հեղափոխական վարչակարգի պահպանումը։

12 من محاضر اجتماعات عبد الناصر العربية و الدولية، ١٩٦٧—١٩٧٠"، ص ٣١.

13 Նույն տեղում, էջ 289

14 Նույն տեղում, էջ 291։

15 Նույն տեղում, էջ 297։

16 Նույն տեղում, էջ 291։

17 Նույն տեղում, էջ 290։

18 Բացահայտ ընդդիմադրության գործունեության մասին մանրամասն տե՛ս *Беляев И. П., Примаков Е. М.* Египет: время президента Насера, с. 299—306

19 من محاضراجتماعات عبد الناصر العربية و الدولية، ١٩٦٧—١٩٧٠"، ص ٦٧٩.

20 Նույն տեղում, էջ 291։

21 Նույն տեղում, էջ 301։

22 Նույն տեղում, էջ 300։

23 Նույն տեղում, էջ 306։

24 „Financial Times", London, 1.3.1968

25 الاهرام"، القاهرة، ٣١ ٥/١٩٦٨.

26 Նույն տեղում, 2.6.1968։

27 Նույն տեղում, 5.6.1968։

28 Նույն տեղում, 2.6.1968։

29 Նույն տեղում, 1.6.1968։

30 Նույն տեղում, 5.6.1968։

31 Նույն տեղում։

32 *Бакланов А. Г.* Рабочий класс современного Египта, М. 1981, էջ 156:

33 طهشاكر، قضايا التحرر الوطني والثورة الاشتراكية في مصر، بيروت، ١٩٧٦، ص ٥٦

34 الا هرام"، ١٩٦٨/٢/٢١.

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում, 5.6.1968։

37 Օմդա—գյուղական տանուտեր, մաշյախա—շեյխի, որպես հողևոր անձի կոչումը կամ պաշտոնը։

38 الاهرام"، ١٩٦٨/٦/١١.

39 كمال المنوفى، الثقافة السياسية للفلاحين المصريين، بيروت، ١٩٨٠، ص ١٧٨

40 *Беляев И. П., Примаков Е. М.* Египет: время президента Насера, էջ 327:

41 *Նույն տեղում։*

42 كمال المنوفي، الثقافة السياسية للفلاحين المصريين، ص ١٧٥.

43 طه شاكر، قضايا التحرر الوطنـي والثورة الاشتراكية في مصر، ص ٥٨.

44 "الاهرام"، ١٩٦٩/١١/٣٠.

45 *Նույն տեղում, 24.12.1969։*

46 *Беляев И. П., Примаков Е. М.* Египет: время президента Насера, էջ 335; «Два Направления социально-экономического развития в Африке», М., 1980, *Гусарова В. И.,* Обострение борьбы за социальный прогресс. *Հոդվածը, էջ 87։*

47 "الاهرام"، ١٩٥٩/١١/٣٠.

48 *Նույն տեղում։*

49 *Նույն տեղում, 21.6.1968։*

50 احمد ثابت،مصريين "التنمية" و "التسوية" بيروت، ١٩٧٦، ص ٧.

51 من محاضر اجتماعات عبد الناصر العربية و الد ولية، "١٩٧٠—١٩٣٧"، ص ١٦٣.

52 فؤادمطر، اين اصبح عبد الناصر في جمهورية السادات، بيروت، ١٩٧٣، ص ٧١—٧٣

53 *Նույն տեղում, էջ 71։*

54 *Նույն տեղում, էջ 72։*

55 *Մեջբերումն ըստ՝ Смирнова Г. И.* Основные проблемы индустриализации Египта, 1952—1977, М., 1980, էջ 135:

56 *Бакланов А. Г.* Рабочий, класс современного Египта, էջ 190: